ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՌՈՒՍԼԱՆ ՅԱԿԱՆՅԱՆ

ԱՄԱՂԵԿԱՑԻՆԵՐ - ՀՅՈՒՔՍՈՍՆԵՐ - ՀԱՅԵՐ (ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ)

... Այս չապոթող ցեղի Նարեկացու շուրթերից
թոռավ ապոթքի ամենարարմեր թոթիչքն ասո Աստված:
Դ. Դեմիրճյան. «Հայը»

Սույն հոդվածի առիթն է հանդիսացել Ախթալա քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու վանահայր Տեր Վիգեն քահանա Ղազարյանի մտահոգությունը՝ համացանցային կայքէջերում զետեղված, առաջարկվող հոդվածի խորագիրը կրող հակագիտական եւ միաժամանակ՝ իր բնույթով բավականին վտանգավոր մի հոդվածի[1] վերաբերյալ: Նշված հոդվածում առկա են բավականին խեղաթյուրված եւ գիտականորեն անհիմն բազում փաստարկներ: Շրջանցելով ո՛չ միայն պատմագիտության դարավոր ձեռքբերումները, այլեւ՝ ազգային ու հոգեւոր արժեքները, փորձ է արվում նույնացնել աստվածաշնչյան ամաղեկացիներին՝ հյուքսոսների, իսկ վերջինիս էլ՝ հայերի հետ: Եւ քանի որ հոդվածի հեղինակները վստահ են, որ հայերն ու ամաղեկացիները նույնական են՝ «Դարաշատ Զախորի» տվյալների հիման վրա՝ գալիս են այն եզրակացության, որ հայերը հրեաների համար հակահրեաներ են, եւ խեղաթյուրելով պատմական փաստերը՝ իրենց պարտքն են համարում շեշտել դրա հակահայկական հետեւանքների մասին: Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ վերոհիշյալ հոդվածը բաղկացած է երկու հակադիր եւ միաժամանակ կարեւոր գործոններից: Դրանցից առաջինը վերաբերում է արտաքին կողմին կամ գիտական ոլորտին, որում առկա են բավականին թերի եւ չհիմնավորված եզրակացություններ: Իսկ հաջորդը վերաբերում է հոդվածի ներքին կողմին, որն իր բնույթով ընդգրկում է բարոյահոգեբանական ոլորտը: Վերջինիս, ի տարբերություն առաջինի, որոշ առումներով կարելի է նաեւ ըմբռնումով մոտենալ:

Անդրադառնալով ամաղեկացիներ-հյուքսոսներ-հայեր նույնացմանը, նշենք մի քանի խիստ կարեւոր դիտարկումներ: Հոդվածն ավելորդ չծանրաբեռնելու համար, կցանկանայինք նշել միայն, որ այդպիսի ձեռնարկումները մեծ մասամբ անհիմն են: Սիրողական մակարդակով խնդրին անդրադառնալու առնչությամբ, ինչպես նաեւ հիմնվելով Հին Կտակարանի տվյալների վրա՝ կարելի է նույնացնել անգամ ցանկացած որեւէ ազգի:

Մասնագիտական գրականության մեջ ընդունված տեսակետի համաձայն հյուքսոսները սեմական ցեղեր էին[2], իսկ ինչ մնում է մեզ՝ հայերիս, ապա բավականին զավեշտալի է

1 http://hayland.am/Blog/ViewPost.aspx?PostID=16004, եւ http://forum.openarmenia.com/topic/27454-амаликтяне-это-гиксосы-а-значит-армяне/page կայքէջերում:

2 **D. B. Redford,** Textual Sources for the Hyksos Period, The Hyksos, Philadelphia, 1997; Bietak M., Avaris Capital

դառնում, քանզի վեցերորդ դասարանում սովորող ցանկացած աշակերտ գիտե անգամ, որ հայերը հնդեվրոպացի են, իսկ մեր լեզուն էլ պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին: Դեռ ավելին, կասկած չկա անգամ, որ մենք տեղաբնիկ ենք: Այս առումով խիստ արժեքավոր է Տ. Վ. Գամկրելիձեի եւ Վ. Վ. Իվանովի բազմակողմանի ուսումնասիրությունը, որը անգնահատելի նպաստ բերեց հայ ժողովրդի եւ հայոց լեզվի բնաշխարհիկ լինելու օգտին[3]: Եվ, հետեւաբար, հայերին հյուքսոսների հետ նույնացնելու ցանկացած փորձ կարծես թե դատապարտված է անհաջողության: Դեռ ավելին, եթե նույնիսկ ընդունենք, որ հյուքսոսները դուրս են եկել Հայկական լեռնաշխարհից՝ միեւնույն է՝ աշխարհագրական տարածույթը նմանատիպ եզրակացությունների հիմք չի կարող հանդիսանալ:

Հաջորդ ժողովրդի՝ ամաղեկացիների վերաբերյալ մեր հիմնական աղբյուրը Աստվածաշունչն[4] է՝ շուրջ տաս հիշատակություններով հանդերձ[5]: Խնդրո առարկա նյութի վերաբերյալ Աստվածաշնչի համապատասխան գլուխները քննելիս՝ այն համեմատության սկզբունքով համադրել ենք Աստվածաշնչի անգլերեն[6] եւ ռուսերեն[7] տարբերակների հետ:

Ինչպես հայտնի է՝ Հին Կտակարանի առաջին գրքերը ոչ մասնագետներին լուրջ եւ գրեթե անլուծելի խնդիրների առջեւ են կանգնեցնում, որպիսիք շատ կան նաեւ վերոհիշյալ հոդվածում: Այդ իսկ պատճառով ոչ մասնագետներին խորհուրդ կտայինք զերծ մնալ անհիմն եւ հակագիտական եզրակացություններից: **Շատ հաճախ եւ որպես կանոն Աստվածաշնչյան, մասնավորապես Հին Կտակարանի նախնական տեքստերի եւ համատեքստերի իմաստը քննարկվում եւ մեկնաբանվում է ընթերցողի, եւ անկախ այն հանգամանքից՝ նա գիտնական է թե ոչ, այժմյան եւ անհատական մոտեցման ազդեցությամբ**: Իրավիճակն էլ ավելի է բարդանում, երբ անհատը ձգտում է Աստվածաշնչյան հաղորդումները մեկնաբանել ներկայիս միջազգային ու ռազմաքաղաքական կամ առավել ես էթնոքաղաքական կացության տեսանկյունից, ընդ որում՝ ավելորդ ու անտեղի երանգավորումներով: Եվ ըստ երեւույթին հենց այս գործոններն են, որ հաճախ թյուրիմացությունների տեղիք են տալիս:

Ամաղեկացիներ. ովքե՞ր էին ամաղեկացիները եւ ինչ կապ կարող էին ունենալ հայերի հետ: Վերոնշյալ հոդվածի հեղինակները կամ հեղինակը ամաղեկ-հայ համադրման արդյունքում բացահայտում է այն ակնհայտ փաստը, թե որքան են հեռու կանգնած ո՛չ միայն պատմագիտական, այլեւ հայագիտական շրջանակներից: Խնդիրը այն է, որ հեղինակը ուղղակի անհեթեթ հետեւություններ է հանգում, օրինակ՝ իբր թե «մելիք» բառը արաբերենը փոխ է առել հայերենից: Անվանի լեզվաբան Հր. Աճառյանի մոտ կարդում ենք. «...արաբ.

---

of the Hyksos Kingdom, The Hyksos, Ph., 1997; Hayes C.W., Egypt: From the death Ammenemes III to Seqenenre II, The Cambridge Ancient History, v. II, part 1, 1973, pp. 42-76.

3 **В. Т. Гамкрелидзе, В. В. Иванов,** Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, т. II, раздел II, гл. 11-12, с. 892-995.

4 «Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանների». եբրայական եւ հունական բնագրերից թարգմանուած, Կ. Պոլիս, 1896 (արեւելահայերեն թարգմանությամբ՝ Էջմիածին, 1989):

5 Ծնող. ԺԴ 7. ԼՁ 1-14,16. Ելից ԺԷ 8-13. Թուոց ԺԴ 43, 45. Երկրորդ Օրինաց ԻԵ 19. Դատաւորաց Գ, 13. Զ 1-40. Է 12. Ա. Թագաւորաց ԺԵ, Լ 1-20. Ա. Մնացորդաց Դ 43:

6 "The Holy Bible", New International Version, Hodder and Stoughton, London, Sydney, Auckland, Toronto, 1992.

7 "Библия", книги священного писания Ветхого и Нового Завета, канонические, напечатано в Финляндии, 1998.

malk, թուրքական արտասանությամբ՝ melik «տէր, իշխան», որ գալիս է mlk «տիրել, իշխել», ընդհանուր սեմական արմատից»[8]: Հոդվածը լի է այսպիսի եւ այլ անհեթեթ հերետութիւններով:

Ամաղեկացիների թափառական ու ռազմատենչ ցեղը ազգակից էր եդոմացիներին եւ իսրայելցիներին (երկու ժողովուրդներն էլ Աբրահամի թոռ Եսավի հետնորդներն էին), ինչպես նաեւ արաբական մի շարք ցեղերին: Դարեր շարունակ ամաղեկացիներն իսրայելցիների ոխերիմ թշնամիներն են եղել: Եգիպտոսից իսրայելցիների դուրս գալու ժամանակ՝ Սինայի անապատում, ամաղեկացիները հարձակվեցին նրանց վրա՝ փակելով ճանապարհը: «Դատավորների» ժամանակաշրջանում Իսրայելի վրա նրանց հարձակումները պարբերական բնույթ են ունեցել: Միայն ամաղեկացիները չէին, որ իսրայելցիներին արգելեցին անցնել իրենց երկրով, այդպիսիք կարելի է միայն թվարել: Նրանց ցեղակից եդոմացիները նույնպես արգելեցին անցնել իրենց երկրով:

Աստվածաշնչում ամաղեկացիներն առաջին անգամ հանդիպում են Աբրահամի ժամանակներում[9], իսկ երկրորդ անգամ՝ Եսավի սերնդի տոհմածառում[10]: Ամաղեկացիների նախահայր Ամաղեկը, ըստ Հին Կտակարանի, Աբրահամի որդի Իսահակի թոռ Եղիփազի՝ Թամնան հարճից ունեցած որդին էր՝



Աբրահամը Սեմի սերնդից էր, իսկ Ամաղեկը՝ Աբրահամի, այսպիսով ակնհայտ է ամաղեկացիների սեմիտական ծագումը, եւ դեռ ավելին, նրանք իրենց ծագմամբ եւ արյամբ ավելի մոտ են կանգնած նույն հրեաներին, այլ ոչ թե հայերին: Իսկ թե նույնացման միտումը որն է, դժվար է ասել: Այստեղ գործ ունենք մի ժամանակավրեպ երեւույթի հետ: Ահա եւ առաջին անհամաժամանակությունը, որն առաջին հայացքից կարծես թե չի նկատվում: Այստեղ ինչպիսի տրամաբանություն էլ որ բանեցնենք, միեւնույնն է, ամաղեկացիները չէին կարող հանդես գալ Աբրահամի ժամանակներում, քանի դեռ չէր ծնվել նրանց նախահայր Ամաղեկը:

8 **Տր. Աճառյան,** Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Եր., 1977, էջ 294:
9 Ծնող. ԺԴ 7:
10 Ծնող. ԼՋ 1-14:

Երրորդ անգամ ամաղեկացիներին հանդիպում ենք Մովսեսի ժամանակներում, երբ Եհովան անիծում է այդ ցեղին[11]: Այսպիսով, անգիջում ու դաժան պայքար էր սպասվում երկու արյունակից ցեղերի՝ իսրայելցիների եւ ամաղեկացիների միջեւ (փասպացի հենց Սեմի տոհմում):

Այժմ դիմենք պատմագիտության ընձեռած եզրակացություններին: Ք. ա. Դ հազարամյակում սեմական ցեղերի մեծ տեղաշարժեր են նկատվում Սիրիայի տարածքից դեպի հարավ ու հարավ-արեւմուտք ուղղություններով: Շուտով նրանց կողմից նվաճվում է ամբողջ Պաղեստինը: Այս ժամանակաշրջանը պատմությանը հայտնի է որպես «Քաղաքային հեղաշրջման» Ժամանակաշրջան: Պաղեստինի բնակչությունը սկսում է ստվարանալ: Ք.ա. արդեն III հազարամյակում (Ք.ա. մոտ XXI դար) ամորեացիները էլամցիների ու խուռիների հետ միասին տապալեցին ՈՒրի III հարստությունը[12]: Սկիզբ է դրվում ամորեական ցեղերի կողմից ամբողջ Սիրիայի նվաճմանը: Այս նվաճումները ամբողջ տարածաշրջանում հեղափոխական նշանակություն ունեցան: Անկում ապրեց քաղաքային մշակույթը[13]:

Ամորեացիներն իրենց նախահոր անունով կոչվում էին Սութու կամ Շեթու, այսինքն՝ այն հանդես էր գալիս որպես էթնոնիմ: Ավելի ուշ Աստվածաշնչում Սութու/Շեթուն պետք է համարվեր որպես ամբողջ մարդկության նախահայր, հանդիսանալով Ադամի ու Եվայի կրտսեր որդին՝ Սեթը[14]:

Ք. ա. ԺԴ դարում Քասական Բաբելոնի թագավոր Քադաշման-Խարբե I-ի հրամանով, Բաբելոնում սութուների կոտորած է կազմակերպվում: Ահաբեկված սութուների մի մասը ստիպված լքում է Բաբելոնը եւ շարժվում դեպի Սիրիա, որտեղ նրանք տեղակայվում են Խառանի շրջակայքում: Այս պատմությունն իր արտացոլումն է գտել նաեւ Աստվածաշնչում՝ կապված Աբրահամի հոր՝ Թարայի պատմության հետ, որը լքելով Միջագետքյան Արեգ (ՈՒր) քաղաքը՝ նույնպես շարժվեց դեպի Խառան [15]: Շուտով, նրանք լքում են նաեւ Խառանը, անցնում Եփրատ գետը եւ շարժվում հարավ-արեւմուտք: Եփրատ գետի անցումը շուտով տալիս է իր արձագանքը Էվերա կամ Էբերա անվան մեջ[16]: Էվերա կամ Էբերա անունն ըստ երեւույթին նշանակում է «անցում գետով», եւ այս անունով այդ ցեղերը սկսեցին կոչվել «իվրիմ/իբրիմ», սակայն հարեւան ժողովուրդները շարունակում էին նրանց սութիներ կոչել[17]: Այն «եբրայեցի» անվան ենթադրյալ տարբերակներից մեկն է:

«Եբրայեցի» անվան երկրորդ ենթադրյալ տարբերակը կապված է Եգիպտոսի պատմության հետ: Ռամզես II (Ք.ա. 1279-1213 թթ.) փարավոնի կառավարման ժամանակներից մեզ է հասել եգիպտական մի բնագիր, որտեղ հիշատակվում է ապիրուների մասին: Ապիրուն, ամենայն հավանականությամբ, աքքադերեն ÆŒpiru/ÆŒ<iru բառն է, որը թարգմա-

11 Ելից ԺԷ 8-13:

12 **Α. Оппенхейм,** Древняя Месопотамия. Портрет погибшей цивилизации, Москва, 1990, стр. 46-47.

13 **Я. Н. Мерперт,** Очерки археологии библейских стран, М., 2000, стр. 121-134 и 153-157. **J. Bottero,** Syria and Palestine c. 2160-1780 B. C., Realitions with Mesopotamia, CAH, v. I, p. 2, 1971, pp. 559-566.

14 Ծնող. Դ 25:

15 Ծնող. ԺԱ 27. **И. М. Дьяконов**, Средневавилонский период в Нижней Месопотамии и Элам, История Древнего Востока, т. I, ч. 1, М., 1983, стр. 422.

16 Ծնող. Ժ 24-25, Ա. Մնացորդաց Ա 17-25:

17 **Ю. Циркин**, История библейских стран, М., 2003, стр. 109.

նաբար նշանակում է հայրենիք եւ սեփականություն չունեցող ժողովուրդ[18]: Ըստ երեւույթին, օտարերկրացիներին ներկայանալու նպատակով հայրենիք չունեցող Աբրահամի ընտանիքը ձեռք բերեց ապիրու անունը, որից էլ ըստ երկրորդ տարբերակի, առաջացել է «եբրայեցի» անվանումը: Հնարավոր է նաեւ, որ անվանումը առաջացած լինի Ադամի չորրորդ սերունդ հանդիսացող նրա կրտսեր որդու՝ Սեմի ծոռ Եբերի անունից, եւ այլն:

Հետաքրքրականն այն է, որ Քանանը նվաճելուց առաջ իսրայելցիները եղել են թափառական, եւ դեռ ավելին, մինչ այդ իսրայելցիները քաղաքներում չէին բնակվել: Եվ ամենայն հավանականությամբ՝ նրանք առայսօր գոյատեւած որոշակի փիրույթներ չեն ունեցել: Նրանք սեփական երկրի տեր դարձան նույնիսկ Քանանը գրավելուց հետո՝ ըստ երեւույթին Ք. ա. ԺԳ դարից ոչ վաղ:

Քիչ անց, սութուների (իբրիմ, ապիրու) ցեղախումբը հայտնվում է Եգիպտոսում[19]: Սակայն Աբրահամը երկար չի մնում նաեւ Եգիպտոսում եւ եղբորորդի Ղովտի հետ դուրս է գալիս այնտեղից եւ շարժվում Քանան: Նրանք գնում էին տեր դառնալու Եհովա աստծո կողմից խոստացված երկրին: Հասնելով Հորդանան՝ երկու եղբայրները բաժանվում են: Ղովտին բաժին են հասնում Հորդանան գետի արեւելյան շրջանները, իսկ Աբրահամը ստիպված շարժվում է դեպի Քանան[20]: Եւ ընդհանրապես, ինչպես հաղորդում են հնագիտական պեղումների արդյունքները, ազգագրական ընդհանրացումներն ու Աստվածաշունչը, իսրայելցիների հյուսիսային ամենամոտ հարեւանները քանանացիներն էին:

Տարածաշրջանի էթնոքաղաքական պատկերը ուներ հետեւյալ տեսքը. քանանացիները, ամմոնացիները եւ մովաբացիները բնակվում էին Մեռյալ ծովի արեւելյան ափերին, փղշտացիները՝ արեւմտյան, իսկ ծայր հարավում եւ Սինայի թերակղզում բնակվում էին նաբաթեացիներն ու եդոմացիները եւ այլն:

Քանանի բնակիչները պետք է բնաջնջվեին («ընծայվեին Աստծուն»): Այն «սուրբ պատերազմ» էր: Ընդհարումները քանանացիների եւ իսրայելցիների միջեւ սովորական երեւույթ էին: Ընդհարման պատճառներից, որպես կարեւորագույն, կարելի է նշել «ջրի» խնդիրը: Ջուրը Պաղեստինում սակավ էր, հատկապես ամռանը կամ չոր կլիմայի պայմաններում, դրա համար էլ քանանացիները կամ Քանանի այլ բնակիչները իրենց ջրհորները պաշտպանում էին թափառական ցեղերից, որոնք ջուր էին վերցնում ոչ միայն իրենց, այլ նաեւ անասունների համար: Իսկ իսրայելցիներն էլ ոչ այլ ինչ էին, քան թափառակյաց ցեղեր: Դեռեւս ժամանակին Նոյը նզովեց քանանացիների նախահայր Քանանին՝ Քամի որդուն[21]:

Եգիպտոսի վերաբերյալ նմանատիպ պատում է հյուսված նաեւ նախամարգարե Մովսեսի գործունեության նկարագրման ժամանակ: Ե՛ւ Աբրահամը, ե՛ւ Մովսեսը, ե՛ւ կարծես թե Հեսու Նավեն դուրս են գալիս Եգիպտոսից: Նախամարգարե Մովսեսի գործունեության շրջանում՝ Եգիպտոսից հրեաների դուրս գալու ժամանակ, ամաղեկացիները հարձակվեցին նրանց վրա, ուստի Մովսեսը հրամայեց կոտորել նրանց: Եվ, ըստ ավանդության, այդ միջադեպը կրկնվում է երեք անգամ: Աբրահամից, Մովսեսից եւ Հեսու Նավեից զատ՝ ամաղե-

18 Տե՛ս "The Assyrian Dictionary of the Oriental Institute of the Univrsity of Chicago", պ, 1956, էջ 31-32, 84-85:
19 Տե՛ս **Д. Ю. Перепелкин,** Древний Египет, ИДВ, т. I, ч. 2, М., 1988, էջ 564:
20 Ծնող. ԺԲ-ԺԳ, ԺԳ 1-13:
21 Ծնող. Թ 18-22, 25-27:

կացիների դեմ կռվել են Սավուղն ու Դավիթը: Սավուղի՝ ամաղեկացիների դեմ պայքարի Աստվածաշնչում ներկայացված տողերը մեջ ենք բերում ամբողջությամբ. «Եւ քաջութիւն (զօրք ժողովեց) արաւ (Սավուղը - Ռ. Ց.) եւ Ամաղէկին զարկեց, եւ ազատեց Իսրայէլին իր կողոպտիչների ձեռքիցը»[22]: Իսկ Դավիթին հաջողվում է վերջնականապես նվաճել եւ հնազանդեցնել նրանց[23]: Սակայն մեր հիմնական խնդիրը հրեաներ - ամաղեկացիներ հարաբերություններն են՝ միայն առաջին երեքի ժամանակաշրջանում:

Վերոշարադրյալը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ այդ իրադարձությունները (հրեաների ելքը Եգիպտոսից) տեղի են ունեցել ո՛չ թե վերոհիշյալ հաջորդականությամբ, այլ մեկ անգամ, այն էլ՝ Հեսու Նավեի ժամանակաշրջանում: Եվ, ընդհանրապես, մեր խորին համոզմամբ՝ Իսրայելի պատմության վերաբերյալ տեղեկություններից իրական պատմական պերք է համարել հենց Հեսու Նավեի ժամանակաշրջանից սկսած, եւ որն էլ կարելի է թվագրել Ք. ա. մոտ ԺԳ դարի վերջին քառորդով: Հեսու Նավեի ժամանակ իսրայելցիների առաջին փորձը ներխուժել Պաղեստին Սինայի թերակղզում անհաջողության մատնվեց: Նեգեվայի հյուսիսային շրջաններում նրանց եւ մղեցին ամաղեկացիներն ու քանանացիները[24]: Այս դեպքերից հետո նրանք անցնում են անդրհորդանանյան տարածքներով՝ ուղղակի շրջանցելով այն, անցնում Մոավի եւ Եդոմի տարածքներով, իսկ հետո ներխուժում Հորդանան: Նրանց մի մասը մնաց նվաճված տարածքներում, իսկ մի մասը՝ իսրայելցիների Հուդա տոհմի գլխավորությամբ, անցավ Հորդանանը եւ գրաղեցրեց պաղեստինյան հողերը: Եվ, ըստ երեւույթին, այս ժամանակներին են վերաբերում, նրանց հակաեգիպտական ելույթները Մերենպտահ փարավոնի օրոք:

Եվ այսպիսով, կարելի է ենթադրել, որ հրեաների նախահայրերը դրսից Պաղեստինի տարածք ներխուժած քոչվոր նվաճողներ էին, իսկ քանանացիներն ու ամաղեկացիները տվյալ ժամանակահատվածում կարծես թե բնիկ:

Ք. ա. ԺԸ դարի վերջին Եգիպտոս են ներխուժում էթնիկական առումով խայտաբղետ, սակայն ծագումով սեմիտական, հյուքսոսների հորդաները: Նրանք ավերում եւ հրի են մատնում քաղաքները, բնակչությանը՝ կոտորում: Ըստ երեւույթին նրանք իրենց անվանումն ստացան եգիպտական Hqa xaswt կամ Hiq shsw («հեկաու խասութ» կամ «հեկաու խասվե», «հեկաու շասու»), «օտար երկրի տիրակալներ» կամ «լեռների տիրակալներ»[25] անվանումից, որը հունարեն տառադարձվում էր ὑκσώς կամ ὑξώς («ուքսոս»): Եգիպտացի պատմիչ Մանեթոնը, ըստ առաջին դարի հրեա պատմիչ Հովսեփոս Փլավիոսի՝ այդ անվանումը թարգմանում է որպես «հյուքսոսներ»՝ «հովիվ արքաներ» կամ Hiq «գերի հովիվներ»: Եգիպտերեն Haq գոյականը թարգմանաբար նշանակում է ե՛ւ ավար, ե՛ւ գերի: Այս ամենը Հովսեփոս Փլավիոսին հիմք է տվել պնդելու, որ հյուքսոսները քանանացիներն էին կամ հենց

22 Ա. Թագաւորաց ԺԴ 48, ԺԵ, Լ:

23 Բ. Թագաւորաց ԺԲ-ԺԴ:

24 Թուոց ԺԴ 45, ԻԱ 1:

25 Եւ ամենեին «լեռների տիրակալներ» անվանումը չի կարող ենթադրել, որ նրանք անպայման պերք է հայեր լինեին: Իհարկե չի բացառվում, որ նրանք նախապես կարող էին բնակվել Հայկական լեռնաշխարհի հարավարեւմտյան սահմանների մատույցներում՝ Հայկական Տավրոսից հարավ: Սակայն ինչպես արդեն նշեցինք, այն չի ենթադրում, որ նրանք հայեր են: Հյուքսոսները, ինչպես նշում են մասնագետները, եւ մասնավորապես եգիպտագետները՝ սեմիտներ էին, տես՛ ծնթ. 2 եւ այլք:

հրեաները[26]: Հովսեփոս Փլավիոսը, որն ամեն գնով փորձում էր ցույց տալ հրեա ժողովրդի պատմության վաղեմության ակունքները՝ հյուքսոսներին քանանացիներ կամ հրեաներ անվանելով, մասամբ սխալվում է: Իհարկե, հյուքսոսները սեմիտներ էին, բայց ոչ հրեաներ:

Նվաճելով Եգիպտոսը՝ հյուքսոսները իրենց մայրաքաղաքը դարձրին սկզբում Մեմֆիսը, իսկ հետո այն տեղափոխվեց Ավարիս[27]: Ինչպես նշում են մասնագետները, մեզ հասած հյուքսոս արքաների եւ ընդհանրապես նրանց անունների մեծամասնությունը՝ արեւմտասեմիտական են: Հնագետները Պաղեստինի տարածքում հյուքսոս արքաների անունները կրող, այն էլ սեմիտական ծագմամբ (Սալիտիս, Շեշի/Բնոն, Յակոբներ, Խիան, Ապոպի, Խամուդի, Սեմքեն, Յակոբ-Բաալ, եւ այլն)՝ մեծ քանակությամբ կոյաբզեզներ են հայտնաբերել[28]:

Հյուքսոսների տիրապետության շրջանը Եգիպտոսում ամենայն հավանականությամբ իր արտացոլումն է գտել Ասպվածաշնչում: Հովսեփի եւ նրա եղբայրների վերաբերյալ ասպվածաշնչյան պատմությունը[29] կարող է եւ դրա վառ վկայությունը հանդիսանալ: Իսկ եգիպտական փարավոնը, որը բարյացակամ գտնվեց Հովսեփի նկատմամբ, փոխեց նրա անունը՝ դնելով Փոսմփթոմփանէ («երկրի փրկիչ»)[30], բարձրացրեց նրան Եգիպտոսում երկրորդ մարդու կարգավիճակին եւ հրեաներին թույլ տվեց բնակվելու Գոշենում (Դելտայում՝ Ավարիսից արեւելք)՝ չէր կարող բուն եգիպտական փարավոն լիներ: Այդ փարավոնն անկասկած հյուքսոս էր:

Այսօր արդեն ապացուցված կարելի է համարել, որ հյուքսոսները ծագում են Պաղեստինից: Շարուքենն ու Ավարիսը նրանց տերության երկու սյուներն էին[31], եւ քանի որ Շարուքենը քանանական քաղաք էր, ապա ամենայն հավանականությամբ կարելի է ենթադրել, որ հյուքսոսներն էլ պետք է որ քանանացիներ լինեին: Ճիշտ է՝ հյուքսոսների մայրաքաղաքն Ավարիսն էր, սակայն, այդուհանդերձ, Շարուքենն ուներ քաղաքական մեծ նշանակություն: Հենց Շարուքենից է, որ հայտնաբերվել է հյուքսոս արքաների անունները կրող վերոհիշյալ կոյաբզեզները, ինչպես նաեւ մեծ քանակությամբ այլ վավերագրեր: Ամենայն հավանականությամբ Շարուքենը հյուքսոսների քաղաքական կենտրոնն ու հենակետն էր: Այն իր հաստատումն է գտնում եգիպտական Նոր թագավորության եւ XVIII հարստության հիմնադիր Յահմոս I (Ք. ա. 1570-1546 թթ.) փարավոնի ռազմական գործողություններում, որը հյուքսոսներին Եգիպտոսից վտարելուց հետո, օր առաջ անհապաղ ձգտում էր գրավել Շարուքենը:

Որ հյուքսոսները Եգիպտոս են ներխուժել Պաղեստինից եւ ունեն սեմիտական ծագում, ինչպես արդեն նշեցինք, կասկած չի հարուցում[32]: Իսկ ինչ մնում է վերոհիշյալ հոդվածում տեղ գտած Shs - yhw (Շասու/Շոսո – յահվե) զույգին, ապա նշենք, որ եգիպտական տեքստերում նրանք հանդես են գալիս նաեւ որպես առանձին ցեղեր Shasu կամ Shoso եւ Y-h-w:

26 **Иосиф Флавий,** Иудейские древности. О древности еврейского народа (Против Апиона), в 2-х томах, М., 2003, т. 2, I, 14, 82-83.

27 **B. D. Redford,** Textual Sources for the Hyksos Period, p. 19.

28 **B. D. Redford,** p. 21, **W. C. Hayes,** Egypt: From the death Ammenemes III to Seqenenre II, pp. 53-55.

29 Ծնող. ԼԷ-Ծ:

30 Ծնող. ԽԱ 45:

31 **M. Bietak**, Avaris Capital of the Hyksos Kingdom, p. 113.

32 **J. S. B. Isserlin,** The Israelites, Thames and Hudson, London, 1998, pp. 52,55.

Սրանց տարածույթն ամենայն հավանականությամբ գտնվում էր անդրհորդանանյան տարածաշրջանում[33]: Հնարավոր է նաև, որ նրանք ազգակից լինեին եւ՛ ամաղեկացիներին եւ ընդհանուր առմամբ հյուքսոս կոչված բազում ցեղերից որեւէ մեկին[34]:

Ք.ա. մոտ 1207 թվականին Պաղեստինը ապստամբում է Եգիպտոսի Մերենպտահ (Ք.ա. 1213-1203 թթ.) փարավոնի դեմ: Ապստամբների շարքում հիշատակվում են Shs, yhw, եւ պատմության մեջ առաջին անգամ հիշատակվում է իսրայելցիների մասին: Վերջիններս նույնպես ապստամբների ճամբարում էին: Բացի այդ էլ, մեր խորին համոզմամբ, Shetu-ն հնարավոր է արտասանված լիներ նաեւ Shesu, իսկ Շեթուն հրեա ազգի հիմք հանդիսացող ցեղերից մեկի ինքնանվանում էր: Եվ, ըստ երեւույթին, հենց Մերենպտահ փարավոնի կառավարման ժամանակաշրջանին էլ պետք է վերագրել իսրայելական 12 տոհմերից բաղկացած հրեական ցեղ ձեւավորումը՝ Հեսու Նավեի առաջնորդությամբ: Հեսու Նավեին հաջողվեց պարտության մատնել քանանացիներին եւ գրավել Պաղեստինը:

Այժմ անդրադառնանք հայերի ծագման Աստվածաշնչյան մեկնակերպին: Այն իր արտացոլումն է գտել հայ պատմիչների երկերում[35]: Հայ անվանի գիտնական Ն. Ադոնցը խնդրի վերաբերյալ նշում է. «Ժողովուրդների ծագումը թաղված է դարերի մթության մեջ: Բոլոր ժողովուրդները երկար կյանք են վարել, թափառել անծանոթ ճանապարհների վրա, էթնիկական եւ աշխարհագրական այնպիսի պայմաններում, որոնք չեն ենթարկվում որեւէ վերահսկողության մինչեւ այն պահը, երբ նրանք երեւան են գալիս պատմության լուսավոր գոտիներում:

Հայերը բացառություն չեն կազմում այս ընդհանուր երեւույթից»[36]:

Հարկ է նշել. որ անվանի գիտնականը հայերի ծագման վերաբերյալ Աստվածաշնչյան տարբերակի առումով ունի իր մեկնակերպը, որին սակայն չենք անդրադառնա[37]: Այստեղ հետաքրքրական է այն փաստը, որ առաջին դարի հրեա պատմիչ Հովսեփոս Փլավիոսի մոտ պահպանված հայերի ծագումնաբանությունը շատ առումներով տարբերվում է հայ պատմիչների մոտ պահպանվածներից: Ըստ Հովսեփոս Փլավիոսի, հայերի նախահայրը Սեմի թոռ եւ Արամի որդի Ուլոսն էր[38] (այն Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ հանդիպում է Հուլ անվամբ[39]): Սակայն, ըստ պատմահայր Մովսես Խորենացու, որի աղբյուրն անկասկած Աստվածաշունչն է, հայերը ծագում են Նոյի որդի Հաբեթի թոռ Թիրասի թոռ Հայկից[40]:

Այժմ ցանկի տեսքով փորձենք ներկայացնել Աստվածաշնչի եւ հայ պատմիչների երկերում պահպանված տեղեկությունները հայերի ծագման վերաբերյալ.

---

33 Ibid: p. 55.

34 **С. А. Васильев,** Шасу новоегипетских источников: к вопросу об идентификации, Древний Восток и античний мир, М., 1998, стр. 13. Հարկ ենք համարում նշել, որ վերոհիշյալ հոդվածի հեղինակների մոտ Ա.Ս. Վասիլեւի սույն հոդվածի անվանումը թերի է ներկայացված:

35 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Եր., 1981: Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, թրգմ., ծնթ. Վ. Վարդանյանի, Եր., 1978, Ի, Ա-Բ: Մխիթար Անեցի, Հանդիսարանների աշխարհավեպ մատյան, թրգմ. եւ ծնթ. Վ. Ա. Եղիազարյանի, Եր., 2001, Ճառ երկրորդ, էջ 6-7:

36 **Ն. Ադոնց,** Հայաստանի պատմություն. Ակունքները X-VI դդ. մ.թ.ա., Եր., 1972, էջ 305-306:

37 Անդ., էջ 311-314:

38 **Иосиф Флавий,** Иудейские древности..., т. 1, I, 93.

39 Ծննդ. Ժ 21-23:

40 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Ի, Դ-Զ, **Թովմա Արծրունի**, Ի, Ա-Բ, այլք:


Ադամ
Եվա
Կայեն
Աբել
Սեթ
Ենոք
Ենովս
Գայիրադ
Կայնան
Մայիել
Մաղաղիել
Մաթուսայել
Յարեդ
Ղամեք
Մաթուսաղաղ
Յոբել
Թուբել-Կայեն
Ղամեք
Նոյեմզարա
Նոյ
Սեմ
Քամ
Հաբեթ
Քանան
Քուշ
Մեյսրիմ
Ներրովթ
Եղամ
Ասուր
Արփաքսադ
Ղուդ
Արամ
Սաղա
Հուս
Հուլ(Ուիլոս)
Գաթեր
Մաշ
Եբեր
Գոմեր(Գամեր)
Մագոգ
Մադայ
Յավան
Թուբել
Մեսեք
Թիրաս
Փաղէկ
Ասքենաս
Ռիփաթ
Թորգոմա
Թիրաս(Մովսիսի Խորենացւոյ, Ի, Ե)
Ռէվգավ
Թորգոմ
Սերուգ
Հայկ Նահապետ
Նաքովր
Արամանյակ
Թարա
Արամայիս
Աբրահամ
Ամասիա
Իսահակ
Գեղամ
Եսավ
Հարմա
Եղիփազ
Արամ
Ամաղեկ
Արա Գեղեցիկ

Ինչպես արդեն նշել ենք, հայ պատմիչների մատյաններում տեղ գտած հայոց ազգի ծագումնաբանության հիմքը Աստվածաշունչն է, եւ հաշվի առնելով նրանց գործած ժամանակաշրջանը՝ այդ խնդիրը ուղղակի տրամաբանական է:

Իսկ ինչ մնում է Պատմահոր մատյանում տեղ գտած հիշատակությունների անհամապատասխանությանը բնագրին, հանգամանալիորեն վերլուծության է ենթարկվել Ս. Մալխասյանի կողմից: Անվանի գիտնականը նշում է. «Ծննդաբանականի մեջ ուղղակի վերելքի կամ վայրէջքի գիծը կազմում է **բուն** (հայր-որդի-թոռ-թոռնորդի-թոռան թոռ եւ այլն), իսկ կողմնակի սերունդները (եղբայրը, սրա եղբայրը, որդին եւ այլն) կազմում են ճյուղերը: Արդ՝ մեր բերած տոհմածառում **բնագիրն** (ուղղակի վայրէջքի գիծն) ունի Հաբեթ-Գամեր-Թորգոմ. Թիրասը ճյուղում է գտնվում, իբրեւ կրտսերը Հաբեթի որդիներից: Նույն տեղում տեսնում ենք, որ Թորգոմը Գամերի որդին է, այնինչ՝ Խորենացին մի անդամով երկարացրել է Հաբեթի ճյուղագրությունը: Նույպես է վարվել եւ Քամի ճյուղագրության մեջ ...: Եվ այդ պատճառները երեւում են Պատմության հաջորդ գլուխներից. նախ պետք էր, որ Հայկն ու Բելը այնքան իրար մոտ լինեին ժամանակով. որ կարողանային իրար հետ պատերազմել (Բել= ըստ Խորենացու՝ Ներբրովթ, Նոյից չորրորդ սերունդ (վերը ներկայացրած մեր ազգերի տոհմածառում Քամի սերունդները տրված են ըստ Աստվածաշնչի – Ռ. Ց.), իսկ Հայկը, Թորգոմի որդին, Նոյից հինգերորդ) ...»[41]:

Այսպիսով, սույն հոդվածի շրջանակներում անիմաստ կլինի ներկայացնել հայ ազգի գիտական ծագումնաբանության բոլոր վարկածները: Նշենք միայն, որ այդպիսի վարկածներն այդքան էլ շատ չեն եւ դեռ ավելին, մատչելի են նույնիսկ աշակերտներին: Իսկ ինչ մնում է հնդեվրոպացի հայերի նույնացմանը որեւէ սեմիտական ծագում ունեցող ժողովրդին, ինչպես փորձում են ցույց տալ վերոհիշյալ հոդվածի հեղինակները, ուղղակի անհեթեթություն է:

Որպես հավելում, նշենք, որ Ժ դարի հայ պատմիչ Թովմա Արծրունին արաբների պարտությունը Գագիկ թագավորից ներկայացնում է որպես ամաղեկացիների երկրորդ պարտություն. «Օրն սկսեց դառնալ ահավոր: Այնժամ արքան բարձրյալի օգնությամբ զորացավ իր զորքի հետ, մանավանդ որ Հայոց սուրբ հայրապետը՝ մեծ Եղիսեն, բարձրացել էր Գինո բլրի կատարը քահանայական դասով հանդերձ եւ սուրբ Ներսեսի պես ձեռքերը վեր էր պարզել, մինչեւ որ պարտվեց երկրորդ Ամաղեկը»[42]: Իսկ կարծել, թե մենք պայքարում էինք ինքներս մեր դեմ, նույնպես անհեթեթ է:

Չնայած վերոհիշյալ հոդվածի հեղինակների մոտ վտանգավորը ո՛չ թե գիտական կամ անտեղյակ լինելու խնդիրն է, այլ նրա բարոյահոգեբանական կողմը: Մենք չենք անդրադառնա հրեամոլության եւ ըստ վերոհիշյալ հեղինակների՝ նրանից բխող խնդիրներին, այլ նրան, որ նրանց մոլորության մեջ է գցել հենց իրենց կողմից մեջ բերած հրեա հեղինակների անտեղյակությունը եւ հակագիտական եզրակացությունները: Հենց այստեղ է, որ թաքնված է հոդվածի ներքին կողմը: Իհարկե գնահատելի է հեղինակների «հայրենասիրական» եւ «ազգասիրական» մղումը, որ մարդկության ամենավեհ գաղափարներից է: Սակայն հենց այս գաղափարների ո՛չ ճիշտ ըմբռնման ու մատուցման արդյունքում է, որ ծնվում են մոլեռանդությանը հատուկ բացասական երեւույթներ: Մոլեռանդությունն ինքնին դեկադենտային երեւույթ է՝ անկախ հանգամանքից ու սին գաղափարներից:

41 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», էջ 461, ծնթ. 18:

42 **Թովմա Արծրունի եւ Անանուն,** Պատմություն Արծրունյաց տան, էջ 303: